ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Ջոն Կիրակոսյանը, Վանո Հակոբյանը, Լիլիա Հարությունյանը, Հայկ Մարիկյանը, Մարտուն Մարտիրոսյանը, Աղունիկ Նալբանդյանը, Արմեն Զուլիակյանը, Անդրանիկ Տոնոյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Արսեն Հարությունյան, Լուսինե Հովհաննիսյան, Գագիկ Շիրմազանյան, Լևոն Քալանթարյան, Սամվել Անտոնյան, Արթուր Սավթայան, Գևորգ Մանուկյան, Գայանե Ղալաչյան, Գրիգոր Պապյան, Էլմիրա Ռևազյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Գրիգորյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Մովսիսյանը**

**Մինչև օրակարգային հարցերին անդրադառնալը համայնքի ղեկավարի առաջարկությամբ և ավագանու անդամների համաձայնությամբ օրակարգային հարցերին ավելացվեց ևս 1 հարց:**

**ԼՍԵՑԻՆ**

***ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է***

1. Հաստատել համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 15)*

**LUԵՑԻՆ**

***ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է***

1. Հաստատել Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն 1-6 հավելվածների:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 16)*

**LUԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-րդ կետով և 82.1-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Ստեփանավան համայանքի ավագանին ***որոշում է***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 17)*

**LUԵՑԻՆ**

***ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ՝ ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Ստեփանավան համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:
2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Ստեփանավան համայնքի 2025թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 18)*

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՅԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՎԱՐՍԻԿ ԱՍՐՅԱՆ

ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՏՈՄ ԳԱԳԻՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ԴԱՎԹՅԱՆ

ԱՆՈՒՇ ԻՍՊԻՐՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՊԱՊՅԱՆ

ԼԵՎՈՆ ՊԱՊՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ________________

*Նիստն արձանագրեց* Հասմիկ Մովսիսյանը

________________________________